

Վարդան Զ. Պետրոսյան  
Բանաս. գիյր. թեկնածու

**ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ Լ (Լ) ԵՎ Ղ (Լ)  
ՁԱՅՆՈՐԴՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՀՆԶԱԲԱՆԱԿԱՆ  
ԱՐԺԵՔԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ**

Տարածամանակյա հայեցակերպ\*

**Բանալի բառեր**–նախահայերեն, նայական ձայնորդ, հետնաքմային (կատկային) հնչյուն, շփական հնչյուն, ենթահնչյոյթ:

Հին հայերենի ձայնորդ հնչյոյթները՝ **լ** (l), **ղ** (t), **մ** (m), **ն** (n), **ռ** (r), **յ** (y/i), **ւ** (w/u), ընդհանուր առմամբ հ.–ե. ձայնորդական համակարգի ռեֆլեքսներն են, միայն թե, ի տարբերություն հ.–ե. նախալեզվի ձայնորդների, որոնց, երիտքերականների ժամանակներից ընդունված ըմբռնման համաձայն, բնորոշ է եղել ինչպես բաղաձայնական (ոչ վանկարար), այնպես էլ ձայնավորական (վանկարար) գործառոյթը, ապա հին հայերենի ձայնորդներից այդպիսի գործառոյթ վերագրվում է միայն **յ** (y/i) և **ւ** (w/u) կիսաձայններին, որոնք կարող էին լինել երկբարբառի և եռաբարբառի (ըստ իս՝ երկբարբառակերպի և եռաբարբառակերպի) բաղադրիչ<sup>1</sup>: Մյուսները չեն ունեցել վանկարար տարբերակներ, ուստի ոչ պատահականորեն Ա. Մեյեն, որը, \*ai, \*au, \*ei, \*ou տիպի երկբարբառներից բացի, հ.–ե. նախալեզվում ընդունել է նաև «հիմնական ձայնավոր + ո՞ / ո՞ / ! / ր՞» կազմույթամբ երկբարբառների գոյությունը (հմմտ. \*omող (հուն. γόμοφος «փայտե մեխ», սնսկ. jámbhah «ատամ», հն սլավ. зѡбъ [zoub] «ատամ»), հյ. գամ «մեխ, բևեռ, սեպ»,– \*ող (հն սլավ. рѡтъ [pout’], հյ. հուն [hun] «անցում», սնսկ. pánthah «ճանապարհ», հուն. πόντος «ծով» (?)),– \*erգ (լատ. uertō «շրջում եմ», սնսկ. várte «շրջվում եմ», գոթ. wairþan «դառնում է»

ՎԿՄ համահայկական հանդես  
Թ (ԺԵ) րարի, թիվ 3 (59), հայիւ-սեպտեմբեր, 2017

\* Հոդվածն ընդունվել է տպագրոյթյան 20.08.2017 թ.:  
1 Տե՛ս Պետրոսյան Վարդան Զ., Հայկական և հնդեվրոպական երկբարբառային համակարգերը, «ՎԷՄ», Եր., 2015, N 3(51), էջ 115-127, Պետրոսյան Վարդան, Հին հայերենի եռաբարբառային կազմույթունները, «Հայագիտոյթյան հարցեր», Եր., 2017, N 1 (10), էջ 128-136:

նն))<sup>2</sup>, հին հայերենում այդպիսիք չի տարբերակում<sup>3</sup>: Եվ առհասարակ հ.-ե. հին լեզուներից *նայական* և *ննգային* վանկարար ձայնորդներ ունեցել է միայն հին հնդկերենը: Մյուս լեզուներում հաճախ դրանց համապատասխանել են «ձայնորդ+ձայնավոր» կամ «ձայնավոր+ձայնորդ» հաջորդակաՆությունները, որոնցում ձայնորդները նայականներն են՝ *r*, *l*, կամ *n*նգայինները՝ *m*, *n* (հմմտ. *\*krd-/\*kerd-* «սիրտ». սնսկ. *hr̥d(aya)-* «սիրտ» - հուն. *καρδία*, լատ. *cor*, գոթ. *hairtō*, լիտվ. *širdis*, հյ. սիրտ,- *\*bhr̥g'h-u* «բարձր», սնսկ. *bṛ̥hant*, հն իռլնդ. *brī*, հյ. *բարձր* [*barjɾ*] նն):

Հին հայերենի **մ** (*m*), **ն** (*n*), **լ** (*l*), **ր** (*r*), **ռ** (*ɾ*) ձայնորդներին գրաբարյան փուլում ընդհանուր առմամբ բնորոշ են եղել հնչարտաբերական և ձայնաբանական նույն բնութագրերը, ինչ որ արդի գրական արևելահայերենում: Այլ է **ղ**(*l*), **յ**(*y/i*), **ւ**(*w/u*) ձայնորդների հարցը:

Հին հայերենի **ղ**(*l*)-ի հ.-ե. համարժեքի (ըստ էության՝ նախաձևի) վերաբերյալ առաջին դիտարկումներն արել են Հ. Հյուբշմանը<sup>4</sup> և Հ. Պեդերսընը<sup>5</sup>, բայց ծագումնաբանական առաջին քննությունը հեղինակել է Ա. Մեյլենը<sup>6</sup>: Հետագայում **ղ**(*l*)-ի ծագման և հնչաբանական արժեքայնության հարցերին անդրադարձել են Հ. Աճառյանը, Է. Աղայանը, Գ. Ջահուկյանը, Հ. Մուրադյանը, Է. Թումանյանը, Մ. Աղաբեկյանը<sup>7</sup>:

**Ղ**(*l*)-ն, ինչպես և **լ**(*l*)-ն, սերվել է հ.-ե. *\*l*-ից, ուստի և այս երկու հնչույթները սովորաբար դիտարկվում են միասին: Ըստ այդմ՝ դիտարկվում են հետևյալ իրողությունները.

1) Նախագրային փուլում այդ երկու ձայնորդները միմյանց նկատմամբ ունեցել են դիրքային բաշխվածություն, այն է՝ եղել են միևնույն հնչույթի՝ <l>-ի կիրառական տարբերակները (=ենթահնչույթները)<sup>8</sup>: Իհարկե, հնարավոր է ցույց տալ **լ** (*l*)-ի և **ղ**(*l*)-ի դիրքային բաշխման որոշակի միտումներ, սակայն ոչ միշտ է հնարավոր սահմանել դրանց գործածության հստակ օրինաչափություններ: Այսպես. ա) բնիկ հայերեն բառերը չէին կարող սկսվել **ղ**-ով. այդպիսի բառերը ստացել են **ա**, **ե** կամ **ռ** ձայնավոր նախաձևավելվածը (հմմտ. *\*bhr̥ev̥t* (>*բղելը*)> *\*ղբելը* > *աղբելը*(-իւր), *\*leug-*

2 Տե՛ս **Meje A.**, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, էջ 134-138: Հ.-ե. նախալեզվում «ձայնավոր+l, r, m, n» (ընդ որում՝ նաև *ei, eu, el* և այլն) տեսակի երկրաբարանների գոյությունն ընդունել է նաև Է. Պոռկոշը (տե՛ս **Прокош Э.**, Сравнительная грамматика германских языков, М., 1954, էջ 92):

3 Տե՛ս **Meillet A.**, Esquisse d'un grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, էջ 42-46:

4 Տե՛ս **Հյուբշման Հայնրիխ**, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, էջ 238,

5 Տե՛ս **Պեդերսըն Հուգեր**, Հայերեն և դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 36-37, 128:

6 Ա. Մեյլեն այդ հարցին հանգամանորեն անդրադարձել է 1911 թ. լույս տեսած «Դիտողություններ դասական հայերենի l-երի մասին» («Remarques sur les l de l'arménien classique») հոդվածում (տե՛ս **Մեյլե Անտուան**, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 75):

7 Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայկականք Զ. (Երբ / դարձավ *ղ*)//Տեղեկագիր ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի, N 5, 1948, էջ 33-40, **Աղայան Էդուարդ**, Հայերենի հնչույթային համակարգի պատմությունից նույնի՝ Լեզվաբանական հետազոտություններ, Եր., 2003, էջ 87-113, **Джаукян Г. Б.**, Очерки по дописьменного периода армянского языка, Е., 1967, էջ 232-235, նույնի՝ Сравнительная грамматика армянского языка, Е., 1982, էջ 41-43, **Մուրադյան Հ. Գ.**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Հնչունաբանություն, Եր., 1982, էջ 206-218, **Туманян Э. Г.**, Структура индоевропейских имён в армянском языке, М., 1978, էջ 45-46, **Աղաբեկյան Մելադա**, Հայերենի համեմատական հնչունաբանության հարցեր, Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պ. 2, Եր., 1998, էջ 84-102:

8 «Ենթահնչույթ» տերմինը մենք գործածում ենք *Մակվայի հնչույթաբանական դպրոցի* (ՄՀԳ) ներկայացուցիչների կողմից կիրառվող вариант-ի նշանակությամբ, իսկ вариация-ի նշանակությամբ գործածում ենք «այլահնչակ» (аллофон/allorphone) տերմինը (տե՛ս, օրինակ, **А. А. Реформатский**, Введение в языкознание, М., 1967, էջ 207-217):

(<\*lug><sup>9</sup>)>hj. ե-դուկ «խեղձ, ողորմելի», \*longh-?(<\*ongh-li-/nogh-li->ե-դունգն<sup>10</sup>, \*lorg>hj. n-դորկ). բ) սկզբնային դիրքում՝ ձայնավորից առաջ և միջձայնավորական դիրքում կարող է հանդիպել ինչպես Լ(Լ) (հմմտ. լերկ (<\*lerg- «հարթ, հավասար, սայթաքուն»), ուլն «վիզ» (<\*olen (<\*el- «ծռել»), ոլոք «արունքուսկր» (<\*olok-)), այնպես էլ դ(Տ) (հմմտ. ե-դուկ (e-tuk) (<\*lug-)<sup>11</sup>, աղարիք (aławri-k') «աղաց» (<\*alatrijo-)). գ) բաղաձայնին նախորդող և հաջորդող դիրքերում առկա է միայն \*Լ-դ(Տ) անցում (հմմտ. եդն «էգ եղջերու» (<\*elno-(<\*el)<sup>12</sup>), ետդ (etđ), տեդի (teđ-i) (<\*sed-lo-(<\*sed- «նստել»), ադտ (atđ) (<\*sald- «ադ, աղահանք»))<sup>13</sup>, դ) բառավերջում՝ ձայնավորից հետո, կարող էր լինել ինչպես Լ (հմմտ. գոլ (<\*ulo-`\*uel- ից «գոլ, տաք»), թել «դերձան» (<\*tek-lo- «գործել, հյուսել») ևն), այնպես էլ դ (հմմտ. գոդ (<\*ulo-`\*uel- ից «պոկել, շորթել, թալանել»), թեդ «դեզ» (<\*tel-`stel-ից «դնել, կանգնեցնել»), ե) Լ կիսաձայնից հետո եղել է դ (հմմտ. ադ (ođ), ցադ, հիդ, շիդ, ընծիդ ևն), իսկ Ե-ից հետո՝ Լ (հմմտ. այլ, գայլ, փայլ, սայլ, թոյլ ևն): Այս միտումը, սակայն, կարող է վերաբերել գրաբարյան հայերենի հետդասական փուլին. դասական գրաբարում (հետևաբար՝ առնվազն նաև գրաբարին անմիջականորեն նախորդող շրջանում) այդ-այլ, գայդ-գայլ, փայդ-փայլ, սայդ-սայլ, նշոյդ-նշոյլ տիպի զուգաձևությունների առկայությունը դ-ով տարբերակների ավելի հին լինելու վկայություններ են<sup>14</sup>, որովհետև դրանց գործածությունը սահմանափակվում է վաղ-գրաբարյան շրջանի մատյաններով (Աստվածաշունչ, Ոսկեբերան, Եվսեբիոս, Ագաթանգեղոս, Փ. Բուզանդ, Մ. Խորենացի ևն)<sup>15</sup>:

2) <Լ>-ի Լ (Լ) և դ (Տ) ենթահնչույթների՝ հնչույթային տարբերակման գործընթացը սկիզբ է առել հայերենի նախագրային փուլում, թերևս՝ 4-րդ դարի սկզբներին: 5-րդ դ. դրանց հնչույթային հակադրությունը դեռևս չէր ներառել հնարավոր բոլոր դիրքերը. բնիկ հայերեն բառերում, ի տարբերություն Լ(Լ)-ի, դ(Տ)-ն չէր կարող լինել բառասկզբում, ուստի այդ դիրքում նրանք գտնվել են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ: Բառասկզբում դ ունեցող բառերը իրանական (դամդայեալ «պձնված», դուկն

9 Գ. Զահուկյանն առաջարկում է \*el- բնաձայնական արմատով նախաձև՝ -nuk վերջածանցումով. նրա կարծիքով Հ. Աճառյանի առաջարկած \*leug- / \*leug'- տարբերակները երկուսն էլ կտային hj. լոյծ, որովհետև u-ից հետո g-ն կտար ծ (տես Գևորգ Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), էջ 215): Այդ դեպքում hj. եդուկ ձևում ե-ն կլինի արմատի բաղադրիչ, այլ ոչ թե նախահավելված:

10 Տես Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊՆԺ), Եր., 1987, էջ 141, Գևորգ Զահուկյան, ՀԱԲ, Եր., 2010, էջ 215: Հ. Աճառյանը hj. եդունգն-ի հնագույն ձև է համարում \*lung-ը՝ նրանից անջատելով ե-ն որպես նախահավելված և -ն-ն՝ որպես վերջնամասնիկ (տես Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հատ. II, Եր., 1973, էջ 23):

11 Հին հայերենում դ-ով սկսվող բառը ստանում էր ա կամ ե ձայնավոր նախահավելվածը, հետևաբար բուն մասն է \*դուկ (\*tuk):

12 Գ. Զահուկյանի ՀԼՊՆԺ գրքում առաջարկվում է \*el-en- նախաձևը (տես Գ. Բ. Զահուկյան, ՀԼՊՆԺ, էջ 121), որը, մեր կարծիքով, ավելի հավանական վերականգնում է, եթե նկատի ունենաք, որ եդն-ը թեք ձևերում լինում է եդին, եդինք, որոնցում, ըստ իս, արտացոլված է նշված նախաձևից բխող h.-ե. \*e>hj. ի (ի) հնչույթային անցումը: Այդ նախաձևի արտացոլումը պիտի համարել հին պլավ. yeleni «եղջերու», ոուս. елень, олень «եղջերու», еленица «եղնիկ», կիմր. elain «եղնիկ» ձևերը:

13 Ըստ Մ. Աղաբեկյանի՝ բառակիզբը կայուն դիրք էր \*Լ-ը անցման համար (տես Աղաբեկյան Մելադա, նշվ. աշխ., էջ 84), սակայն, ինչպես տեսանք, այդ դիրքում երկու անցումներն էլ հնարավոր էին: 14 Տես Աղայան Էդուարդ, նշվ. աշխ., էջ 103:

15 Ըմմտ. Աճառյան Հր., ՀԱԲ, հատ. I, Եր., 1971, էջ 168, 511 և այլն:

(ներկ)<sup>16</sup>, հունական (դանդանոն «խունկ», դափաթոն «ավելուկ», դենտի «դենջակ», դեպտոն, դետիկոն, դիմնիսկոս «վարիանտի նշանը», դորտոս «մուրացիկ», դրամ «գիր»)՝<sup>17</sup> և ստրական (դեկ (lēqā))<sup>18</sup> փոխառություններ են: Դասական գրաբարում գործածվել են նաև դողիլ «թաքնվել, ծածկվել» և դողանջ «լացի ձայնը» բառերը, որոնց ծագումն անհայտ է:

3) Բառավերջի դիրքում լ(լ)-ն և դ(դ)-ն ձևավորել են հնչույթային (=իմաստատարբերակիչ) հակադրություններ (հմմտ. գոլ-գող, տալ-տաղ, խուլ-խուղ, ցելի (ցելում «պատռել» բայի անց. կատ.)- ցեղի (ցեղ «տոհմ» գյ. եզ. սեռ. հլ.) են), բայց հնչույթաբանական տեսանկյունից այդ դիրքը բացարձակ չէ. ի ձայնավորից հետո լ-դ հակադրություն չկա. նրանք ձևավորում են միևնույն բառի տարբերակները (հմմտ. ջիլ-ջիղ, շիլ-շիղ, տիլ(բրբռ.)-տիղ(-մ) են):

4) Դասական հայերենում երկուսն էլ դեռևս եղել են ձայնորդներ. սկզբնական շրջանում լ(լ)-ի և դ(դ)-ի հիմնական տարբերակիչ հատկանիշը, թերևս, սահմանազատումն էր արտաբերության տեղով. լ(լ)-ն ուներ կողային (латеральный), իսկ դ(դ)-ն՝ հետնալեզվային (заднеязычный) (ըստ ամենայնի՝ հետնալեզվային (велярный) արտաբերություն<sup>19</sup>: Ղ(դ)-ն ձայնեղ շփականի է վերածվել ուշգրաբարյան կամ վաղմիջինհայերենյան փուլում՝ 9-11 դդ.<sup>20</sup>: Ձայնորդների դասից (դ(դ)) անցնելով ձայնեղների դասը (դ(դ))՝ դ-ն լծորդային հարաբերություն է կազմել խ(x) պարզ խուլ շփական հնչույթի հետ:

«Հին հյ. դ(դ)-նիսիյրն \*ԷՀ.-ե. \*Լ» համապատասխանությունից բացառություն են ներկայացնում բնիկ հայերեն երկու բառ՝ «աղբեր»/(աղբիր)/ (<\*bhrēvr̥) և «եղբայր»(<\*bhrátēr), որոնց դ-ն սկիզբ է առնում հ.-ե. \*r-ից: Օրինաչափորեն այդ բառերը հայերենում պիտի ունենային «արբեր» և «երբայր» ձևերը (հմմտ. \*bhr̥t-i> բարդ(-ի), \*bhr̥g̊iō->բարտի, \*bhr̥g̊hu-r>բարձր, \*bhr̥ug->երբուծ «կրծքամիս» են): Հ. Աճառյանը, հ.-ե. նախաձևի և հայերենի միջև վերականգնելով, համապատասխանաբար, (\*բրեր>\*բղեր>\*ղբեր) և (\*բրայր>\*բղայր>\*ղբայր) անցումային օղակները, \*ր>\*ղ հնչյունափոխությունը բացատրում է տարնմանությամբ<sup>21</sup>: Այդ դեպքում, սակայն, բաց է մնում այն հարցի պատասխանը, թե ինչու տարնմանությունը չի գործել նաև նմանատիպ մյուս դեպքերում: Երկու բառերի դեպքում էլ ցեղակից լեզուներն ունեն r, հետևաբար հավանական չէ, որպես բարբառային տարբերակ, վերականգնել նաև \*bhlēvr̥, \*bhlátēr նախաձևեր: Բացառություն է կապադովկյան հունարենը, որի Լ(λ)-ով ձևը՝ πλεσρδ «աղբեր», համարվում

16 Տե՛ս Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, հատ. I, Ե., 1940, էջ 269:

17 Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. II, Ե., 1953, էջ 22: Հունարեն բառերից 6-ը հայերենի դ-ի դիմաց ունեն լ(լ) և միայն մեկն ունի ր(ջ) րթմա:

18 Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. I, էջ 339:

19 Տե՛ս Մեյե Անտուան, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 77, Աճառյան Հ., Հայկական Զ. (Երբ լ դարձավ դ) // Հայկ. ԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), Եր., 1948, N 5, էջ 33, Աղայան Է., Հայերենի հնչույթային համակարգի պատմությունից, նշվ. աշխ., էջ 107, Туманян Э. Г., նույն տեղում:

20 Տե՛ս Աճառյան Հ., Երբ լ դարձավ դ, նույն տեղում, էջ 40: Այս ժամանակագրությունն ընդհանուր առմամբ ընդունել են հետագա բոլոր ուսումնասիրողները (հմմտ. Աղայան Էդուարդ, նշվ. աշխ., էջ 107-108, Джаукян Г. Б., Очерки ..., էջ 233, Մուրադյան Հ. Գ., նշվ. աշխ., էջ 211):

21 Տե՛ս Աճառյան Հր., ՀԱԲ, հատ. I, էջ 125:

է փոխառություն հայերենից<sup>22</sup>: Պիտի ենթադրել, որ, իբրև միայն հայերենին բնորոշ իրողություններ, «աղբեր» և «եղբայր» բառերի նշված՝ **ղ**-ով ձևերը հայերենի վաղնջագույն փուլում գոյություն ունեցած բարբառային տարբերակներ են, որոնք էլ տարածվել են՝ դառնալով ընդհանուրհայերենյան իրողություններ: Բարբառային այդ ձևն է փոխառել նաև կապադովկյան հունարենը:

Նախագրային հայերենի **ղ(ղ)**-ի՝ **հ**-ե. \***լ**-ից սերված լինելու և ձայնորդական բնույթ ունենալու մասին են վկայում նաև հետևյալ իրողությունները.

1) Հայերենի ինչպես **լ (լ)**-ի, այնպես էլ **ղ (ղ)**-ի դիմաց **հ**-ե. ցեղակիցներն ունեն **լ**-ով համապատասխանություններ (հմմտ. **հյ**. գելում (*\*yelo-*) «ոլորել, պտտել» – հուն. *εἰλω*, լատ. *volvō* «ոլորել, գլորել», մսկ. *valati* «պտտվում է», **հյ**. *լքանեմ* (*\*lin-k-*)– հուն. *λείπω* «թողնում եմ», լատ. *linquō* «լքում եմ», բայց՝ **հյ**. **աղ** (*\*sal, \*sali*)– գոթ. *salt*, հն վրն գրմ. *salz*, լատ. *sal*, հուն. *ἅλα* [*hals*], հն ւլավ. *solī*, ռու. *солъ* (*sol'*),– **հյ**. **ետղ** // **տեղի** (*\*sed-lo-*) «տեղ»– լատ. *sella* «աթոռ», գոթ. *sitls*, հն վրն գրմ. *sezall* «նստարան, տեղ» հուն. լակոն. *ἐλλά*, անգլլք. *sētī* ևն)<sup>23</sup>: Հատկապես հունարեն–հայերեն առնչություններում այդ համապատասխանությունը գրեթե բացառություններ չի ձանաչում (հմմտ. *Ἀγαθάγγελος*= Ագաթանգեղոս, *Ἱεροσαλήμ*=Երուսաղեմ, *Λουκιανός*=Պուլիխանոս, *μάκελλον*=մակեղոն, *εκκλησία*=եկեղեցի, *καθολική*=կաթողիկե, *ἴλιος*=հիղէ, *μελωδία*=մեղեղի, *σίκλος*=սիկղ (կշիռ և դրամ) ևն):

2) Որոշ բառային միավորների դեպքում առկա են **լ/ղ** հերթագայական տարբերակներ (հմմտ. (ան)ալի–աղի, այլ(այլայլե)–աղավաղել, ելունդ–եղունդ<sup>24</sup>, ծուլամ–ծուղամ<sup>25</sup> (իմա՝ *ծուլանամ* «ծուլանում եմ»), մառախլապատ–մառախուղ, յուլանամ–յուղանամ «թուլանալ, ծուլանալ»<sup>26</sup>, սալար–սաղար «գորագլուխ», թոյլ–թողուլ, նշոյլ–նշողել, շիլ–(շեղ>)շիղ, ջիլ–ջիղ (ճիլ–(ճիղ>)ճեղ), տիլ(բրբռ.–)տիղմ). նշված օրինակներից այլ (այլայլե)–աղավաղել, թոյլ–թողուլ և նշոյլ–նշողել ձևերում **լ>ղ** անցումը Հ. Աճառյանը բացատրում է **լ**-ի անկումով («... **լ**-ից հետո լինում է միշտ **լ**...»)<sup>27</sup>: Ավաճիին պիտի ավելացնել նաև **ի>ե** (հմմտ. \*ասիղն> ասեղ (սեռ. ասղան), խիղձ>խեղձ (սեռ. խ(ը)ղձի), մժիղ >մժեղ (սեռ. մ(ը)ժղան) ևն ) և **ի>ի** (հմմտ. շեղ>(շիղ)>շիղ) տիպի անցումները **ղ**-ին նախորդող դիրքում: **Լ>ղ** հնչյունափոխությունը կարող է պայմանավորված լինել նախահայերենի **ղ(ղ)**-ի հետնաքմային բնույթով, այն է՝ երկու հնչյունների քմայնացած լինելը արգելք էր անմիջականորեն միմյանց հարևանությամբ հանդես գալու համար, որովհետև նրանց միջև հակադրությունը (контраст) բավարար չէր:

22 Նույն տեղում:

23 Իհարկե, պիտի նկատի ունենալ, որ հին հնդկերենում **ր**-ն և **լ**-ն հավասարապես կարող էին սկիզբ առնել **հ**-ե. \***ր**-ից կամ \***լ**-ից (տես **Семереньи О.**, Введение в сравнительное языкознание, М., 1980, էջ 56, **Барроу Т.**, Санскрит, М., 1976, էջ 80–82): Հետևաբար հնարավոր չէ ասել, թե այդ լեզուներում հայերենի **լ(լ)**-ի համարժեքը **հ**-ե. հատկապես որ հնչույթից է սերում՝ \***ր**-ից, թե՛ \***լ**-ից:

24 Տես Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Եր., հատ. I, 1979, էջ 650, **Պեղերսըն Հուզեր**, Հայերէն և դրացի լեզուները. Վիեննա, 1907, էջ 144–145, **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հատ. II, Եր., 1973, էջ 11:

25 Տես **Զահուկյան Գ. Բ.**, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 170:

26 Նույն տեղում, նաև՝ «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», Անթիլիաս, 1988, էջ 599:

27 Տես **Աճառյան Հր.**, Երբ **լ** դարձավ **ղ**, նշվ. աշխ., էջ 33:

Հին հայերենի **ղ(ł)**-ի հնչարտաբերական բնույթի մասին կարելի է պատկերացում կազմել ժամանակակից գրական ֆրանսերենի շփական **ր(γ)**-ի առաջացման օրինակով: Մինչև նախորդ դարի 40-ական թթ. այն եղել է թրթռուն արտաբերությամբ ձայնորդ՝ [r], ինչպես հայերենի **ռ[ր]**-ն կամ ռուսերենի **р[ր]**-ն, սակայն 40-ականներից հետո ֆրանսերենի փարիզյան խոսվածքում **ր**-ի արտաբերությունը ստանում է *դարասական* (картавий) երանգ, ինչպիսին է հայերենի, վրացերենի կամ արաբերենի *լեզվակային* (увулярный) շփական **ղ(γ)**-ն՝ չդադարելով, սակայն, մնալ ձայնորդ: Ոմանք նրան վերագրում են *կոկորդային* (երասային/фарингальный) արտաբերություն<sup>28</sup>: Ֆրանսերենի դատասական **ր(γ)**-ն կազմավորվում է լեզվի թիկնակի ետին մասի և փափուկ քիմքի միջև: Ըստ այդմ՝ նրա թրթռացող արտաբերությունը փոխարինվել է լեզվամեջքայինով (дорсальный)<sup>29</sup>: Թրթռուն ձայնորդից անցումը շփականի, ըստ ամենայնի, պայմանավորված է եղել արտաբերության տեղի փոփոխությամբ, իսկ այդպիսի տեղաշարժի պատճառ կարող էր լինել այն, որ ֆրանսերենի հնչույթային համակարգում թրթռային **ր**-ն չուներ իր լծորդը: Վերածվելով լեզվամեջքային շփական ձայնորդի՝ այն լծորդային շարք է կազմում «/x/ հնչույթի հետ՝ վերջինից տարբերվելով ձայնի առկայությամբ»<sup>30</sup>: Ժամանակակից գրական ֆրանսերենի **ր [γ]**-ն արտաբերական դիրքի փոփոխությամբ լրացրել է այն բաց վանդակը, որն առաջացել էր հին ֆրանսերենում՝ բաղաձայնին նախորդող դիրքում, շրթնային **ք**-ի՝ որպես «**լ**-ի և **լ**-ի (փափկացված) ձայնավորների տարբերակի» առաջացումով:

Հին հայերենի **ղ(ł)** և **լ(ł)** հնչյունների հարաբերակցության բնույթի վերաբերյալ ասվածները հաստատվում են նաև տիպաբանական տվյալներով: Այսպես.

Ա) Հին հայերենի **ղ(ł)** և **լ(ł)** հնչյունների հարաբերակցությանը բնորոշ լրացուցիչ բաշխման (=ենթահնչույթային) հարաբերություններ տեղ են գտել նաև այլ լեզուներում, ինչպես՝ հին, այնպես էլ՝ ժամանակակից: Օրինակ՝ խեթերենում **ր** և **լ** նայական ձայնորդներն ունեցել են դիրքային բաշխման մասնակի սահմանափակում: Մասնավորապես՝ 1) **ր**-ը, ի տարբերություն **լ**-ի, չէր կարող լինել բառասկզբում, 2) **լ**-ն չէր կարող զուգորդվել նախորդող **տ**-ի հետ, ի տարբերություն **ր**-ի<sup>31</sup>: Կորերենում **ր**-ը և **լ**-ը միևնույն հնչույթի ենթահնչույթներն են. այդ լեզվում «ձայնավորին նախորդող դիրքում նայականը հնչում է ինչպես [r], բոլոր մյուս դիրքերում՝ ինչպես [l]»<sup>32</sup>: ՄՀԴ-ի ներկայացուցիչները ենթահնչույթային հարաբերակցություն են տեսնում ռուսերենի **и** և **ы** ձայնավորների միջև (հմմտ. **играть**

28 Տե՛ս **Щерба Л. В.**, Фонетика французского языка, М., 1955, էջ 75-77, **Гордина М. В.**, Фонетика французского языка, Л., 1973, էջ 79-81: Ըստ Հ. Աճառյանի՝ ֆրանսերենի **ր**-ն ունի *gugnin*, այլ ոչ թե շփական արտաբերություն (տե՛ս **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 6, Եր., 1971, էջ 176):

29 Տե՛ս **Мартини А.**, Принцип эканомии в фонетических изменениях, М., 1960, էջ 138: Փարիզյանից բացի, ֆրանսիայի մյուս բարբառներում և խոսվածքներում շարունակում է գործածվել առաջնալեզվային թրթռուն **ր [r]**-ն: Այդպիսով, արդի ֆրանսերենում գործառում է երկու տեսակի **ր՝ դարասական**՝ գրական ֆրանսերենում և Փարիզի խոսվածքում, և *թրթռուն*՝ ֆրանսիայի մնացյալ բարբառներում:

30 **Мартини А.**, նույն տեղում:

31 Տե՛ս **Иванов В. В.**, Хеттский язык, М., 1963, с. 79-80:

32 **Якобсон Р., Фант Г. М. и Халле М.**, Введение в анализ речи. Различительные признаки и их корреляты, «Новое в лингвистике», вып. II, М., 1962, с. 183:

«խաղալ»-сыгран «խաղացված է»)»<sup>33</sup>:

բ) Հետնաքմային Լ(Լ) ունեցել են դասական լատիներենը, հին ֆրանսերենը, լեհերենը: Լատինական Լ-ն «բավականին վաղ սկսել են արտաբերել իբրև կոշտ բաղաձայն» (հմմտ. alba «սպիտակ՝ արևածագը», pulmo «թոք»)»<sup>34</sup>: Նրա արտաբերությունը կազմավորվել է լեզվի արմատի մոտ և ունեցել է ս-ին մոտ հնչում: Լ-ի հետնաքմային արտաբերությունը պահպանվել է պորտուգալերեն և կատալաներեն լեզուներում, իսկ ժամանական մյուս լեզուներում այն ենթարկվել է ձայնավորացման<sup>35</sup>:

Նոր հնչույթների առաջացումը, որպես կանոն, *գոնգամեր* (конвергентный) կամ *դիվերգամեր* (дивергентный) գործընթացների արդյունք է: Այլ հարց է, թե յուրաքանչյուր որոշակի դեպքում հատկապես ինչն է այդպիսի գործընթացների պատճառ դառնում: Հին հայերենի հետնաքմային (կատկային) ձայնորդ ղ(Լ)-ի շփականացումը և անցումը ձայնեղների դասին, պիտի ենթադրել, տեղի է ունեցել շփական խ[x] պարզ խուլ հնչույթի ազդեցությամբ: Վերջինը, չունենալով իր լծորդը հին հայերենի հնչույթային համակարգում և, ըստ էության, գտնվելով խոցելի վիճակում, դեպի իրեն է ձգել որոշակի հնչյունական հատկանիշներով, մասնավորապես՝ արտաբերության տեղով իրեն մոտ հնչյունը՝ նախահայերենի <\*լ> (<\*Լ>) ձայնորդի \*ղ(Լ) ենթահնչույթը<sup>36</sup>, և նրա հետ լծորդություն կազմելով՝ ամրապնդել է իր տեղը հայերենի հնչույթային համակարգում: Այդպիսով, հայերենի հնչույթային համակարգը հարստացել է ևս մեկ հնչույթով, որը չունեին հ.-ե. հին լեզուները (բացառությամբ, թերևս, դասական լատիներենի) և, բնականաբար, չի վերականգնվում հ.-ե. նախալեզվում:

Հետնաքմային ղ(Լ)-ն կարող էր առաջանալ բարբառներից մեկում կամ սահմանակից մի քանի բարբառում, ապա տարածվել նաև մյուս բարբառներում՝ վերածվելով ընդհանուրլեզվական երևույթի: Տվյալ դեպքում պիտի կարծել, որ այն, նախ, առաջացել է Պատմական Հայաստանի կենտրոնական բարբառներում՝ Արարատյան, Տուրուբերանի, ապա անցել է ընդհանուր հայերենի հնչույթային համակարգին, քանի որ այդ բարբառներն էին ընկած հին գրական հայերենի հիմքում:

Այսպիսով, 1) հին հայերենի Լ(Լ) և ղ(Լ) ձայնորդները սկիզբ են առել նախահայերենի <\*լ> (<\*Լ>)-ից, որն էլ իր հերթին սերում է հ.-ե. \*Լ ձայնորդից. հայերենի նախագրային փուլում այդ հնչյունները միմյանց նկատմամբ գտնվել են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, այն է՝ եղել են միևնույն հնչույթի՝ <\*Լ>-ի ենթահնչույթները (իմա՝ խոսքային հիմնական տարբերակները). 2) չնայած որ դասական հայերենի սկզբում 5-րդ դարում, մասնավորապես՝ բառավերջի դիրքում Լ(Լ)-ն և ղ(Լ)-ն արդեն ձևա-

33 И и ы ձայնավորների հարաբերակցության բնույթի հարցը՝ ինքնուրույն հնչույթներ են, թե՛ միևնույն հնչույթի դիրքային տարբերակները, ռուս լեզվաբանության մեջ վիճահարույց է (տե՛ս Шерба Л. В., Избранные работы по русскому языку, М., 1957, էջ 177-179, Матусевич М. И., Современный русский язык. Фонетика, М., 1976, էջ 83-88, Зиндер Л. Р., Общая фонетика, М., 1979, էջ 65-66, Панов М. В., Современный русский язык. Фонетика, М., 1979, էջ 150-153):

34 Бурсье Э., Основы романского языкознания, М., 1952, с. 45:

35 Տե՛ս նույն տեղում, էջ 149:

36 Հմմտ. «... Иг рннхататական նայականները, այսինքն՝ /л/-ի տիպի կողայինները, կենտրոնական մատուց հպումը համակցում են բաց կողային անցման հետ ...» (տե՛ս Якобсон Р., Фант Г. М. и Халле М., նշվ. աշխ., էջ 182):

վորել են իմաստատարբերակիչ (=հնչույթային) հակադրություն (հմմտ. գող-գոլ, տաղ-տալ են), բայց դա չի կրել բացարձակ բնույթ. որոշ բառերում դեռևս գործառել են իբրև ազատ հերթագայական տարբերակներ (հմմտ. գայլ-գայղ, այլ-այղ են). 3) ղ(ł)-ն և լ(l)-ն ազատ հերթագայական հարաբերության մեջ են գտնվել նաև բառավերջում՝ ի ձայնավորից հետո (հմմտ. ջիլ-ջիղ, տիլ-տիղ(-մ) են), իսկ բառասկզբում նրանց հարաբերակցությունը դեռևս կրում էր ենթահնչույթային բնույթ (այդ դիրքում բնիկ հայերեն բառերը չէին կարող սկսվել ղ(ł)-ով, այն է՝ չկար լ-ղ հակադրություն). 4) հին հայերենի ղ(ł)-ն եղել է հետնաքմային/(կատկային) ձայնորդ և լ(l)-ից տարբերվել է հիմնականում արտաբերության տեղով. վերջինը կողային էր. 5) հին հայերենի ղ-ի վերածվելը շփականի (ɣ) և անցումը ձայնեղների դասը տեղի է ունեցել 9-11-րդ դդ. ընթացքում. 6) ինչպես ղ(ł)-ի՝ աստիճանաբար հետնաքմային արտաբերություն ստանալը, այնպես էլ ձայնորդների դասից անցումը ձայնեղների դասը, ըստ ամենայնի, տեղի է ունեցել հետնավեզվային խուլ խ(x)-ի ազդեցությամբ. 7) եթե ղ(ł)-ի հնչույթային սահմանազատումը լ(l)-ից տարամետ զարգացումների արդյունք է, ապա նրա վերածվելը ձայնեղ շփականի խ(x)-ի առնմանական ազդեցության արդյունք է:

**Վարդան Զ. Պետրոսյան** – ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, մասնագիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է լեզվի տեսության, համեմատական լեզվաբանության, հայոց լեզվի պատմության, մասնավորապես՝ հին հայերենի համաժամանակյա և տարաժամանակյա հնչույթաբանության հարցերը:

Էլ. huug@vz.petrosyan@ysu.am

## Summary

### THE ORIGIN AND PHONEMIC VALUE OF THE OLD ARMENIAN Ղ(L) AND GH Ł(L)

#### Diachronic Concept

Vardan Z. Petrosyan

**Key Words:** Pre-Armenian, liquid sonorant, Velar sound, fricative sound, sub-phoneme.

The ղ(ł) and լ(l) sonorants of Old Armenian were the main speech variations of the pre-Armenian sonorant phoneme <\*l> and were in a sub-phoneme relation with each other. In the 5<sup>th</sup> century, at the initial stage of Classical Armenian, ղ(ł)-լ(l) contrast appears especially at the ending position of the word. It had a function of semantic distinction (phonological). However, in native Armenian it was excluded for ղ(ł) to appear at the beginning of a word. This means that here, in this position, they were in an additional relation of distribution (sub-phonological). Most apparently, the phonemicization of ղ(ł) as a velar sound is the result of divergent developments.



## ПРОИСХОЖДЕНИЕ И ФОНЕМАТИЧЕСКАЯ ЗНАЧИМОСТЬ СОНОРНЫХ Ղ(Լ) И Լ(Լ) ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

### Диахронический аспект

**Ключевые слова** – праармянский язык, плавный сонорный, велярный звук, фрикативный звук, субфонема

Сонорные ղ(Լ) и Լ(Լ) древнеармянского языка, находясь между собой в субфонемных отношениях, были основными речевыми вариантами сонорной фонемы <\*l> праармянского языка. В начальном периоде классического армянского, в 5-м веке, в частности, в конечной позиции слова, появляется противопоставление между ղ(Լ) - Լ(Լ) со смысловозначительной (= фонемной) функцией, но в исконно армянских словах начало слова было исключенной позицией для ղ(Լ), что означает, что в этой позиции они находились в соотношении дополнительного распределения (=субфонемного). Судя по всему, фонемизация ղ(Լ), как велярного сонорного, результат дивергентного развития.